



Ղազարոս Աղայան

Քյորոլին՝ ջաղացպան

Մեկ անգամ Քյորոլու ծառաներից մեկը՝ Քաչալ-Համգան, փախել էր: Քյորոլին հեծավ իր հոշակավոր Ղոաթը և ընկավ Համգայի հետևից, որ բռնե նրան և պատժե:

Համգան դեռ շատ չէր հեռացել: Նա ետ մտիկ տվավ ու տեսավ, որ հեռվից փոշի է բարձրանում, իսկույն գլխի ընկավ, որ Ղոաթի բարձրացրած փոշին է այն, ուր որ է՝ Քյորոլին պիտի հասնե և բռնե նրան: Հնար չկար փախչելու: Նրա բախտից՝ նույն տեղը մի ջաղաց կար, վազեց մտավ ջաղացը, երես-մերեսը արաթաթախ արավ, շորերն էլ նույնպես, և այսպես կերպարանափոխված՝ դուրս եկավ կանգնեց ջաղացի դռանը:

Քյորոլին ձին քշած եկավ և, Համգային պատահելով՝ հարցրեց, թե՛ այս նշանով մարդ չանցա՞վ արդյոք:

Ինչպես չէ, պատասխանեց Համգան, քո ասած նշաններով մի մարդ մտավ այս բոպեխս իմ ջաղացը:

Ուրեմն, բռնի՛ր ձիս, ասաց Քյորոլին և իջավ ձիուց:

Ձին թողեց Համգայի ձեռքին, իսկ ինքը մտավ ջաղացը, տեսավ, որ այնտեղ ոչ ոք չկա, դուրս եկավ, որ բարկանա ջաղացպանի վրա, բայց կեղծ ջաղացպանը արդեն Ղոաթի վրա էր:

Անպիտա՛ն, ինձ խաբեցիր՝ բավական չէ՞, համարձակեցար հեծնել նաև իմ
Ղռաթի՞ս, ասաց Քյորոլին բարկությամբ:

Շատ մի՛ խոսիր, պատասխանեց Համգան, այժմ Քյորոլին ե՛ս եմ, իսկ դու գնա՛
ջաղացպանություն արա. նայիր միայն, որ լա՛վ աղաս, կորկոտ չանես: Այս
ասելով՝ Ղռաթի գլուխը շրջեց ստահակ ծառան, և՛ այսօր ես անհայտացել, թե
էգուց...

Քյորոլին նոր գլխի ընկավ, որ փախչողը Համգան էր, բայց էլ ի՞նչ կարող էր
անել: Նա, քա՛հ-քա՛հ ծիծաղելով իր միամտության վրա, գլուխը թափ տվավ և
մտավ ջաղացը:

Քյորոլին սովորություն չուներ հուսահատվելու, այս տեսակ դեպքերը նրա միշտ
ուրախ ու գվարթ տրամադրությունը չէին խանգարում: Նա տեսավ, որ ամբարը
լիքն է ցորենով, բայց ջաղացպանն ուրիշ տեղ է գնացել, ջուրը կապեց նավի մեջ,
բա՛ն ձգեց աղորիքը: Երբ որ չախչախն սկսեց իր ներդաշնակ շխշրխկոցը՝
Քյորոլին նրան սագի տեղ համարեց և սկսեց երգել հետևյալ երգը.

Ա՛յ, Քյորոլի, ջա՛ն Քյորոլի,
Ա՛յ, Քյորոլի, ջա՛ն Քյորոլի,
Քեզ խաբեց Համգան, Քյորոլի՛, հա՛յ, հա՛յ, հա՛յ.
Բայց որ դառել ես ջաղացպան
Կանչի՛ր, թող գա դան, Քյորոլի՛, ջա՛ն,
Չա՛ն Քյորոլի, ջա՛ն,
Չա՛ն Քյորոլի:

Մարդու բախտն է ահա այսպես,
Պտրտվում է ջաղացի պես.
Մեկ օր ահռելի վիշապ ես,
Մյուս օր՝ ջաղացպա՛ն, Քյորոլի:

Բայց դու էլի Քյորոլին ես,
Ժողովրդի սիրելին ես.
Թեկուզ ջաղացպան էլ լինես՝

Քեզ պատիվ կրտա՛ն, Քյորոլի՛:

Թեև Ղոաթիցրդ գրկված՝

Բայց թուր ունիս վրադ կապած.

Համզան ստրուկ, թոկից փախած,

Իսկ դու ազատ խա՛ն, Քյորոլի՛:

Մոտրդ կանչիր հրսկաներիդ,

Հավատարիմ կտրիճներիդ,

Թող գան գտնեն փախած գերիդ,

Չըկորչի Համզա՛ն, Քյորոլի՛:

Քյորոլու ձայնը շատ ահեղ էր. այս երգը երգելուց հետո բարձրացավ շաղացի տանիքի վրա և այնպես որոտաց, որ նրա ձայնը, սար ու ձոր դնբացնելով, հասավ մինչև Չամլիբեյ, ուր գտնվում էր Քյորոլու անմատչելի բերդը: Քյորոլու կինը՝ Նիզյար խանումը, որ շատ սուր լսողություն ուներ, ամենից շուտ իմացավ, որ իր ամուսինը մի անակնկալ փորձանքի է հանդիպել: Իսկույն իմաց տվավ քաջերին, որոնք մի ակնթարթում դուրս թափվեցին բերդից և հասան իրանց խմբապետին: Դրանց մեջ նշանավոր էին Դամյորջոլին, Իսաբ-Ալին և Գզիր-օլի Մուստաֆա-բեգը: Երբ որ գնացին տեսան Քյորոլուն շաղացպանություն անելիս, Ղոաթը խլել տված՝ շատ ծիծաղեցին, և Դամյորջոլին մի երգով շնորհավորեց Քյորոլու նոր արհեստը և նոր առուտուրը (որովհետև Համզան, Ղոաթը փախցնելով, նրա փոխարեն իր ջորին թողել էր նրա մոտ):

Թող երգե Դամյորջոլին, տեսնենք՝ ի՛նչ է երգում և ի՛նչ ձևով.

Նոր վաճառական ես դառել,

Առըտուրդ շնորհավոր,

Ձին տըվել ես, ջորին առել,

Առըտուրդ շնորհավոր,

Ձին տըվել ես, ջորին առել,

Առըտուրդ շնորհավոր, հոգի՛ս,

Առըտուրդ շնորհավոր:

Այտուրդ ջորուն կրբարձես,
Բագար կրտանես կրծախես,
Դեղին ոսկիք կրհավաքես,
Առըտուրդ շնորհավոր:

Քեզ կասեն՝ ուստա Առուշան,
Երբ կրլինիս լավ ջաղացպան,
Գըլուխ-գըլուխ շահադ կըտան,
Առըտուրդ շնորհավոր:

Դամյորջողի՛, շատ լավ կանես,
Որ Քյորոլուն գովաբանես,
Ասեն լավ վաճառական ես,
Առըտուրդ շնորհավոր...

Ծառաս փախել է մինչ Արաբըստան՝
Շո՛ւտ արեք, ուր որ է՝ փնտրեցեք բերեք,
Շլընքին զարկելով կապեք կոները,
Արաբ ձիու վրրա բարձեցեք բերեք.
Շլընքին զարկելով կապեք կոները,
Արաբ ձիու վրրա բարձեցեք բերեք:

Իր գործած հանցանքը դրրեք իր վրզին,
Որ չասեն՝ անմեղ էր, իգուր պատժեցին,
Մորթեցեք եզան պես, քերթեցեք կաշին,
Միսը մաս-մաս արեք, ջարդեցեք բերեք:

Քյորոլին եմ ես, չեմ մնալ ջաղացպան,
Իմ Ղոաթին երբեք չի տիրիլ Համզան,
Գետնի տակն էլ լինի՝ հանեցե՛ք նրան,

Ձիու պոչից կապած՝ քաշ տրվեք բերեք:

* * *

Ինչ ասել կուզի, որ Քյորթլու հրամանը շուտափույթ կատարվեց: Քյորթլուն պատահած այս արկածը պատմվում է և ուրիշ ձևով: